

Ֆինանսական հաշվետվություններ

*ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ ՍԼԱՎՈՆԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ԲՄԿՊՈՒՀ*

31 դեկտեմբերի 2012թ.

Բովանդակություն

Անվանում	Էջ
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	3
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն....	5
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն.....	6
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն.....	7
Ծանոթագրություններ և այլ բացատրական տեղեկատվություն.....	9

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

31 դեկտեմբերի 2012թ. դրությամբ

հազ. դրամ

Անվանում	Ծնթ.	2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ				
<i>Ոչ ընթացիկ ակտիվներ</i>				
Հիմնական միջոցներ	1	1043270	1269610	1413200
Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ	1	585011	585011	571093
Հողամասեր				
Ոչ նյութական ակտիվներ	2	1222	1222	1222
Ոչ ընթացիկ ակտիվների գծով կանխավճարներ				
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ				
Շահութահարկի գծով նվազագույն վճարումներ				
<i>Ընդամենը</i>		<u>1629503</u>	<u>1855843</u>	<u>1985515</u>
<i>Ընթացիկ ակտիվներ</i>				
Պաշարներ	3	36700	86010	112694
		126		
Տրված ընթացիկ կանխավճարներ				
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր		1536	25231	23112
		77054	32802	46926
Դեբիտորական պարտքեր բյուջեներին				
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	4	63484	37650	45219
		1873		1800
Այլ ընթացիկ ակտիվներ				
<i>Ընդամենը</i>		<u>180773</u>	<u>181693</u>	<u>229751</u>
<i>Ընդամենը ակտիվներ</i>		1810276	2037536	2215266
<i>Սեփական կապիտալ և պարտավորություններ</i>				
<i>Կապիտալ և պահուստներ</i>				
Բաժնետիրական կապիտալ				

Լրացուցիչ կապիտալ				
Կուտակված շահույթ/վնաս	5	392803	385024	308519
Ընդամենը		<u>392803</u>	<u>385024</u>	<u>308519</u>
Ոչ ընթացիկ պարտավորություններ				
Վարկեր և փոխառություններ	6			
Ակտիվներին վերաբերվող շնորհներ		933468	1174551	1326421
Պահուստներ				
Ընդամենը		<u>933468</u>	<u>1174551</u>	<u>1326421</u>
Ընթացիկ պարտավորություններ				
Վարկեր և փոխառություններ	6	203870	72439	123196
Պահուստներ				
Կրեդիտորական պարտքեր բյուջեներին		830	15904	382
Կրեդիտորական պարտքեր պարտադիր սոց ապահ.			16954	101
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր		245936	272533	342418
Ստացված ընթացիկ կանխավճարներ		33360	96875	113478
Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ հատկ.		9	3256	751
Ընդամենը		<u>484005</u>	<u>477961</u>	<u>580326</u>
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		<u>1810276</u>	<u>2037536</u>	<u>2215266</u>

Այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասն են կազմում ներկայացված կից ծանոթագրությունները:

Տնօրեն

Գլխավոր հաշվապահ



Ա. Դարբինյան

Տ. Գևորգյան

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

01.01.2012-31.12.2012

հազ. դրամ

Անվանում	Ծնթ.	2012թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2010թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հասույթ	7	743130	805599	823350
Վաճառքի ինքնարժեք	8	-365903	-324740	-294690
Համախառն շահույթ/(վնաս)		<u>377227</u>	<u>480859</u>	<u>528660</u>
Իրացման ծախսեր	9	-5619	-15926	-19453
Վարչական ծախսեր	10	-385365	-405823	-424218
Այլ եկամուտներ	11	990972	1020817	905572
Այլ ծախսեր		-957458	-977236	-855841
Գործառնական գործունեությունից շահույթ/(վնաս)		<u>19757</u>	<u>102691</u>	<u>134720</u>
Այլ ֆինանսական արդյունքներ		-10033	-5648	-66749
Շահույթ/(ծախս) մինչև հարկերը		9724	97043	67971
Շահութահարկի զծով ծախս		-1945	-20538	-22970
Տարվա շահույթ/(վնաս)		<u>7779</u>	<u>76505</u>	<u>45001</u>

Այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասն են կազմում ներկայացված կից ծանոթագրությունները:



Ա. Դարբինյան

Տ. Գևորգյան

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

01.01.2012-31.12.2012

Անվանում	Ծնթ.	Բաժնե- տիրական կապիտալ	Լրացուցիչ կանոնա- դրական կապիտալ	Կուտակված շահույթ (վնաս)	Ընդամենը
2010թ. հունվարի 1-ի դրությամբ		0	0	263518	263518
Ճշգրտումներ	13				
Տարվա շահույթ				45001	45001
Շահաբաժիններ					
2011թ. հունվարի 1-ի դրությամբ		0	0	308519	308519
Ճշգրտումներ					-
Տարվա շահույթ				76505	76505
Շահաբաժիններ					
2012թ. հունվարի 1-ի դրությամբ		0	0	385024	385024
Ճշգրտումներ					-
Տարվա շահույթ				7779	7779
Շահաբաժիններ					
2013թ. հունվարի 1-ի դրությամբ		0	0	392803	392803

Այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասն են կազմում ներկայացված կից ծանոթագրությունները:

Տնօրեն

Գլխավոր հաշվապահ

Ա. Դարբինյան

Տ. Գևորգյան



Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

01.01.2012-31.12.2012

Անվանում	Ծնթ.	2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2011թ. դեկտեմբերի 31- ի դրությամբ	2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
<i>Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>				
Հաճախորդներից ստացված դրամական հոսքեր		700849	706725	1698065
Եկամուտներին վերաբերվող շնորհներից մուտքեր		1030396	1035320	0
Այլ գործառնական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր		73825	77952	46820
Մատակարարներին վճարված դրամական միջոցներ		-292131	-266971	-533689
Աշխատակիցներին վճարված դրամական միջոցներ		-947780	-955762	-1143089
Վճարումներ պետական բյուջե և սոցիալական ապահովագրության հիմնադրամ		-362013	-284711	-418402
Այլ գործառնական գործունեությունից դրամական միջոցների ելքեր		-257756	-285831	-21409
<i>Գործառնական գործունեության համար օգտագործված զուտ դրամական հոսքեր</i>		-54610	26722	-371704
<i>Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>				
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարում				
Ֆինանսական ակտիվներով գործառնությունից		-4558	-2515	236
Շահաբաժինների և տոկոսների ստացումից				
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		-25007	-91	
Փոխառությունների տրամադրումից				
<i>Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ</i>		-29565	-2606	236
<i>Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>				
Սեփական կապիտալի գործիքների թողարկումից և վերավաճառքից				

Փոխառություններից մուտքեր		485183	729387	130367
Վճարված շահաբաժիններ և տոկոսներ		-5483	-12064	-11
Փոխառությունների մարումից		-353752	-780144	-7171
<i>Ֆինանսական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ</i>		125948	-62821	123185
<i>Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ</i>		<u>41773</u>	<u>-38705</u>	<u>-248283</u>
<i>Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա</i>		-15939	31136	1049
Դրամական միջոցներ տարվա սկզբին		37650	45219	292453
Դրամական միջոցներ տարվա վերջին		63484	37650	45219

Այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասն են կազմում ներկայացված կից ծանոթագրությունները:



Ա. Դարբինյան

Տ. Գևորգյան

Ծանոթագրություններ և այլ բացատրական տեղեկատվություն

(ա) Գործարար միջավայր

Հայաստանի գործարար միջավայր

Համալսարանն իր գործունեությունն իրականացնում է միայն Հայաստանում: Հետևաբար, Համալսարանի գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկաները, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակվում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական ու ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող ընկերությունների համար: Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Համալսարանի գործունեության և ֆինանսական վիճակի վրա գործարար միջավայրի ազդեցության դեկլարարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել դեկլարարության գնահատականից:

(բ) Կազմակերպչական կառուցվածքը և հիմնական գործունեությունը

Ռուս-Հայկական Սլավոնական համալսարանը Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության համատեղ վարման միջպետական ուսումնական հաստատություն է:

Համալսարանը հանդիսանում է իրավաբանական անձ և օգտվում է Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության պետական համալսարանների կարգավիճակից:

Համալսարանը հիմնադրվել է 1997թ. օգոստոսի 29-ի «ք. Երևանում Ռուս-Հայկական Համալսարանի հիմնադրման և գործունեության պայմանների մասին» Ռուսաստանի Դաշնության կառավարության Հայաստանի Հանրապետության կառավարության միջև կնքված համաձայնագրի և Հայաստանի Հանրապետության կառավարության 1997թ. նոյեմբերի 27-ի «Երևան քաղաքում Ռուս-հայկական Համալսարան հիմնադրելու մասին» 543 որոշման համաձայն:

Համալսարանը գրանցվել է քաղաք Երևանում: Պետական գրանցման համարը – 264.0120, գրանցման ծածկագիր – 10045854, գրանցման վկայական համար – 004587, գրանցման տարեթիվ՝ 24.11.1998թ.:

Համալսարանի հիմնադիրներն են Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության կառավարությունները:

Համալսարանի հիմնադիրների իրավասությունները իրականացնում են Կրթության դաշնային գործակալությունը և Հայաստանի Հանրապետության Կրթության և Գիտության նախարարությունը:

Համալսարանն իր գործունեության բնագավառներում հանդիսանում է կրթական, գիտական, հետազոտական և մեթոդական կենտրոն:

Համալսարանի գործունեությունը կարգավորող հիմնական փաստաթուղթը կանոնադրությունն է:

Համալսարանի կանոնադրությունը, բոլոր փոփոխությունները և լրացումները դրանում ենթակա են գրանցման Համալսարանի գտնվելու վայրում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

Համալսարանը ունի առանձնացված գույք, ինքնուրույն հաշվեկշիռ, եկամուտների և ծախսերի նախահաշիվ, հաշվարկային և այլ հաշիվներ՝ Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության բանկային ու այլ վարկային կազմակերպություններում դրամական միջոցներ պահելու և բոլոր տեսակի հաշվարկային, վարկային և դրամարկային, այդ թվում՝ արտարժույթային գործողություններ կատարելու համար:

Համալսարանն ունի իր անվամբ կնիքներ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով, իր անվամբ դրոշմակնիքներ և ձևաթղթեր, շքանշաններ և մեդալներ, ինչպես նաև դրոշ, խորհրդանիշ և օրհներգ:

Համալսարանի հիմնական եկամուտը ձեռավորվում է Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության պետական բյուջեներից ստացվող շնորհներից, ինչպես նաև սեփական եկամուտներից:

Համալսարանի գտնվելու վայրն է Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Հովսեփ Էմինի փ. 123:

Պատրաստման հիմունքներ

(ա) Համապատասխանության մասին հայտարարություն

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Փոքր և Միջին կազմակերպությունների Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) պահանջների համաձայն:

(բ) Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով:

(գ) Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է («դրամ»), որը հանդիսանում է Համալսարանի ֆունկցիոնալ արժույթը և սույն ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Ֆինանսական ամբողջ տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

(դ) Անընդհատության սկզբունք

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության սկզբունքից ելնելով, քանի որ Համալսարանը ձեռք է բերել պահանջվող ֆինանսավորման զգալի մասը: Ի լրումն, մասնակիցը հայտնել է իր մտադրությունն անհրաժեշտության դեպքում Համալսարանին տրամադրել պահանջվող ֆինանսական աջակցությունը և ապահովել համապատասխան իրացվելիություն գործունեությունը շարունակելու համար:

(ե) Գնահատումների և դատողությունների օգտագործում

Այս ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ-ի պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումներն ու համապատասխան ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում վերանայվել են և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա առավելագույն էական ազդեցություն ունեցող հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ժամանակ կատարած կարևոր դատողությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է հետևյալ ծանոթագրություններում.

- Ծանոթագրություն – հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետ,

Այն ենթադրությունների և անորոշությունների վերաբերյալ գնահատումների մասին տեղեկատվությունը, որոնք ենթադրում են հաջորդ ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվությունների տվյալների էական ճշգրտման ռիսկ, ներկայացված է հետևյալ ծանոթագրություններում.

Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների նկատմամբ:

(ա) Արտարժույթ

Արտարժույթով գործարքներ

Արտարժույթով իրականացված գործարքները փոխարկվում են ՀՀ դրամի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները վերափոխարկվում են ՀՀ դրամի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Դրամային միավորների գծով արտարժույթով իրականացված գործարքներից շահույթը կամ վնասը հանդիսանում է հաշվետու տարվա սկզբի դրությամբ ֆունկցիոնալ արժույթով արտահայտված, արդյունավետ տոկոսադրույքով և ժամանակաշրջանի ընթացքում վճարումներով ճշգրտված անորոշագծված արժեքի և արտարժույթով արտահայտված ու հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ գործող փոխարժեքով փոխարկված անորոշագծված արժեքի տարբերությունը:

Սկզբնական արժեքով չափվող արտարժույթով արտահայտված ոչ դրամային միավորները փոխարկվում են գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Արտարժույթի վերափոխարկումից առաջացած տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

(բ) Ֆինանսական գործիքներ

(i) Ոչ ածանցյալ ֆինանսական գործիքներ

Ոչ ածանցյալ ֆինանսական գործիքները ներառում են բաժնային և պարտքային արժեթղթերում կատարած ներդրումները, առևտրական և այլ դեբիտորական պարտքերը, դրամական միջոցները և դրանց համարժեքները, վարկերը և փոխառությունները, առևտրական և այլ կրեդիտորական պարտքերը:

Համալսարանը վարկերը և դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչում է դրանց առաջացման օրը: Բոլոր այլ ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչումը տեղի է ունենում առք ու վաճառքի օրը, երբ Համալսարանը դառնում է գործիքի պայմանագրային դրույթների կողմ:

Համալսարանը ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ փոխանցում է ֆինանսական ակտիվից դրամական հոսքերի ստացման պայմանագրային իրավունքները, այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները: Մասնակցությունը փոխանցված ակտիվում, որն առաջացել կամ պահպանվել է Համալսարանի կողմից, ճանաչվում է որպես առանձին ակտիվ կամ պարտավորություն:

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվելով զուտ գումարով, միայն այն դեպքում, եթե Ընկերությունն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

Համալսարանը ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվները դասում է վարկերի և դեբիտորական պարտքերի դասակարգին:

Վարկեր և դեբիտորական պարտքեր

Վարկերը և դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներն են, որոնք գնանշված չեն գործող շուկայում: Այս ակտիվների սկզբնական ճանաչումը տեղի է ունենում իրական արժեքով՝ գումարած ուղղակիորեն վերագրելի գործարքի հետ կապված ծախսումները: Սկզբնական ճանաչումից հետո վարկերը և դեբիտորական պարտքերը չափվում են ամորտիզացված արժեքով, կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ համաժ արժեզրկումից կորուստները:

Վարկեր և դեբիտորական պարտքեր դասակարգը ներառում է ակտիվների հետևյալ դասերը՝ առևտրական և այլ դեբիտորական պարտքերը (ծանոթագրություն 7) ու դրամական միջոցները և դրանց համարժեքները (ծանոթագրություն 4):

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ են համարվում դրամական միջոցների մնացորդները:

(ii) Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ

Բոլոր այլ ֆինանսական պարտավորությունների սկզբնական ճանաչումը տեղի է ունենում առք ու վաճառքի օրը, երբ Համալսարանը դառնում է գործիքի պայմանագրային դրույթների կողմ:

Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ պայմանագրում նշված պարտականությունը կատարվում է կամ չեղյալ է համարվում կամ ուժը կորցնում է:

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվելով զուտ գումարով, միայն այն դեպքում, եթե Ընկերությունն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև հաշվարկը

զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

Համալսարանը ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունները դասակարգում է այլ ֆինանսական պարտավորությունների դասին: Այս ֆինանսական պարտավորությունների սկզբնական ճանաչումը տեղի է ունենում իրական արժեքով՝ հանած գործարքին ուղղակիորեն վերագրելի բոլոր ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո այս ֆինանսական պարտավորությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Այլ ֆինանսական պարտավորությունները ներառում են վարկերը և փոխառությունները, բանկային օվերդրաֆտները, առևտրական և այլ կրեդիտորական պարտքերը:

(iii) Բաժնետիրական կապիտալ

Սովորական բաժնետոմսեր

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ: Սովորական բաժնետոմսերի թողարկմանն ուղղակիորեն վերագրելի լրացուցիչ ծախսումները ճանաչվում են որպես սեփական կապիտալի նվազում՝ առանց հաշվի առնելու հարկային հետևանքները:

(գ) Հիմնական միջոցներ

(i) Ճանաչում և չափում

Հիմնական միջոցների միավորները, բացառությամբ հողատարածքի, չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Սկզբնական արժեքը ներառում է ակտիվի ձեռքբերմանն ուղղակի վերագրելի ծախսումները: Սեփական ուժերով կառուցված ակտիվների սկզբնական արժեքը ներառում է նյութերի արժեքը, ուղղակի աշխատուժի գծով ծախսերը, ակտիվն իր նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ անմիջականորեն կապված ցանկացած այլ ծախսումները, ակտիվի ապատեղակայման և քանդման ծախսերը, տեղանքի վերականգնման ծախսերը, ինչպես նաև կապիտալացված փոխառության ծախսումները: Ձեռք բերված համակարգչային ծրագիրը, որը հանդիսանում է համապատասխան սարքավորման ֆունկցիոնալության անբաժանելի մասը, կապիտալացվում է որպես սարքավորման մաս:

Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ (հիմնական բաղկացուցիչներ):

Հիմնական միջոցի միավորի օտարումից ստացված շահույթը և վնասը որոշվում է՝ համեմատելով օտարումից ստացված մուտքերը հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքի հետ և ճանաչվում է զուտ հիմունքով «Այլ եկամուտներ/այլ ծախսեր» հոդվածում՝ շահույթում կամ վնասում:

(ii) Հետագա ծախսումներ

Հիմնական միջոցների բաղկացուցչի փոխարինման ծախսերը ճանաչվում են միավորի հաշվեկշռային արժեքում, երբ հավանական է, որ Համալսարան կհոսեն այդ միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները և վերջինիս արժեքը հնարավոր կլինի արժանահավատորեն չափել: Փոխարինվող բաղկացուցչի հաշվեկշռային արժեքն ապաճանաչվում է: Հիմնական միջոցների ամենօրյա սպասարկման ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ առաջանալուն պես:

(iii) Մաշվածություն

Մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի սկզբնական արժեքի հիման վրա՝ հանած դրա մնացորդային արժեքը: Առանձին ակտիվների էական բաղկացուցիչները գնահատվում են, և եթե բաղկացուցչի օգտակար ծառայության ժամկետը տարբերվում է ակտիվի մնացած մասերի օգտակար ծառայության ժամկետից, ապա այդ բաղկացուցչի մաշվածությունն առանձին է հաշվարկվում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների յուրաքանչյուր մասի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, քանի որ այս մեթոդն առավել ճիշտ է արտացոլում ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտների օգտագործման մոդելը: Հողատարածքի գծով մաշվածություն չի հաշվարկվում:

Ստորև ներկայացված են օգտակար ծառայության գնահատված ժամկետները ընթացիկ և համեմատական ժամանակաշրջանների համար:

շենքեր եւ շինություններ	10 տարի
մեքենա-սարքավորումներ	5 տարի
Տրանսպորտային միջոցներ	5 տարի
տնտեսական միջոցներ	5 տարի
այլ հիմնական միջոցներ	5 տարի

Մաշվածության հաշվարկի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում և անհրաժեշտության դեպքում՝ ճշգրտվում:

(դ) Ոչ նյութական ակտիվներ

(i) Ծանաչում և չափում

Համալսարանի կողմից ձեռք բերված ոչ նյութական ակտիվները, որոնք ունեն օգտակար ծառայության սահմանափակ ժամկետ, չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և կուտակված արժեզրկումից կորուստները:

(ii) Հետագա ծախսումներ

Հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ նրանք ավելացնում են այն առանձին ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտները, որին վերաբերում են: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ Համալսարանի ներսում ստեղծված գուղվիլը և ֆիրմային անվանումները, ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ առաջանալուն պես:

(iii) Ամորտիզացիա

Ամորտիզացիան հաշվարկվում է ակտիվի սկզբնական արժեքի կամ այլ փոխարինող գումարի գծով՝ հանած դրա մնացորդային արժեքը:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, քանի որ այս մեթոդն առավել ճիշտ է արտացոլում ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտների օգտագործման մոդելը:

Օգտակար ծառայության գնահատված ժամկետներն ընթացիկ և համեմատական ժամանակաշրջանների համար հետևյալն են.

- լիցենզիաներ, Համակարգչային ծրագրեր 1 տարի

Ամորտիզացիայի հաշվարկի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում և անհրաժեշտության դեպքում՝ ճշգրտվում:

(ե) Վարձակալված ակտիվներ

Ընկերությանը վարձակալված ակտիվները չեն ճանաչվում Համալսարանի ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

(զ) Պաշարներ

Պաշարները չափվում են սկզբնական արժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Պաշարների սկզբնական արժեքը հաշվարկվում է «միջին կշռված» սկզբունքով և ներառում է պաշարների ձեռք բերման ծախսերը, արտադրական կամ փոխարկման ծախսերը և դրանք ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված այլ ծախսեր: Արտադրված պաշարների և անավարտ արտադրանքի դեպքում սկզբնական արժեքը ներառում է արտադրական վերադիր ծախսումների համապատասխան մասը՝ հիմք ընդունելով արտադրական նորմատիվային հզորությունը:

Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի գնահատված գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար գնահատված ծախսումները:

(է) Արժեզրկում

- (i) Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվը գնահատվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ արժեզրկման անկողմնակալ վկայություն հայտնաբերելու նպատակով: Ֆինանսական ակտիվը համարվում է արժեզրկված, եթե անկողմնակալ վկայությունը ցույց է տալիս, որ ակտիվի սկզբնական ճանաչումից հետո տեղի է ունեցել կորստի դեպք, և այդ կորստի դեպքը բացասական ազդեցություն է ունեցել տվյալ ֆինանսական ակտիվի ապագա գնահատված դրամական հոսքերի վրա, որը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ֆինանսական ակտիվների արժեզրկման անկողմնակալ վկայությունը կարող է ներառել պարտականությունների չկատարումը կամ վճարումների հետաձգումը պարտապանի կողմից, Համալսարանին վճարվելիք գումարի պայմանների այնպիսի վերանայումը, որն Համալսարանն այլ հանգամանքներում չէր դիտարկի, պարտապանի կամ թողարկողի սնանկացման հայտանիշները, փոխառումների կամ թողարկողների վճարումների կարգավիճակի բացասական փոփոխությունները, տնտեսական պայմանները, որոնք կապված են ակտիվների գծով ձախողումների հետ:

Վարկեր և դեբիտորական պարտքեր

Համալսարանը վարկերը և դեբիտորական պարտքերը դիտարկում է արժեզրկման վկայության անհատական և հավաքական հիմունքներով: Բոլոր առանձին վերցված նշանակալի վարկերը և դեբիտորական պարտքերը գնահատվում են արժեզրկման տեսանկյունից՝ անհատական հիմունքով: Եթե բոլոր առանձին վերցված նշանակալի վարկերը և դեբիտորական պարտքերի արժեզրկման առանձին վկայություն չի հայտնաբերվում, ապա դրանք գնահատվում են հավաքական հիմունքով՝ տեղի ունեցած, սակայն չբացահայտված արժեզրկման վկայություն հայտնաբերելու նպատակով: Վարկերը և դեբիտորական պարտքերը, որոնք առանձին վերցված նշանակալի չեն, գնահատվում են արժեզրկման տեսանկյունից հավաքական հիմունքով՝ խմբավորելով ռիսկի համանման բնութագրերով վարկերը և դեբիտորական պարտքերը:

Հավաքական արժեզրկումը գնահատելիս Համալսարանը դիտարկում է պարտականությունների չկատարման նախկինում առկա միտումները, մարումների ժամկետները, կրած վնասի գումարը, որոնք ճշգրտվում են հաշվի առնելով ղեկավարության դատողությունները, թե արդյոք ներկա տնտեսական և վարկավորման պայմանները թույլ են տալիս, որպեսզի փաստացի վնասը ավել կամ պակաս լինի նախկինում առկա միտումներով առաջարկվողներից:

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվի արժեզրկումից կորուստը հաշվարկվում է որպես ակտիվի հաշվեկշռային արժեքի և այդ ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույթով գեղջված դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերություն: Կորստի գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ պահուստային հաշվում՝ դեբիտորական պարտքերի դիմաց: Համալսարանը շարունակում է ճանաչել արժեզրկված ակտիվի գծով տոկոսները գեղջի վերականգնման միջոցով: Եթե հետագայում տեղի ունեցած դեպքը հանգեցնում է արժեզրկումից կորստի գումարի նվազեցմանը, ապա արժեզրկումից կորստի գումարի նվազեցումը հակադարձվում է շահույթի կամ վնասի միջոցով:

(ii) Ոչ ֆինանսական ակտիվներ

Համալսարանի ոչ ֆինանսական ակտիվների, բացառությամբ պաշարների և հետաձգված հարկային ակտիվների, հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ որոշելու արդյո՞ք առկա է որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվը կարող է արժեզրկված համարվել: Եթե որևէ այդպիսի հայտանիշ առկա է, ապա գնահատվում է ակտիվի փոխհատուցվող գումարը: Անսահմանափակ օգտակար ծառայության ժամկետ ունեցող կամ օգտագործման համար դեռևս ոչ մատչելի գույքիլը և ոչ նյութական ակտիվների համար փոխհատուցվող գումարը գնահատվում է յուրաքանչյուր տարի՝ միևնույն ժամանակ: Արժեզրկումից կորուստ ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա գնահատված փոխհատուցվող գումարը:

Ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարը որոշվում է որպես հետևյալ երկու մեծություններից առավելագույնը. օգտագործման արժեք և իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսերը:

Օգտագործման արժեքը գնահատելիս դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերը զեղչվում են՝ օգտագործելով մինչև հարկումը զեղչման այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի տվյալ շուկայի ներկա գնահատականը և այդ ակտիվին կամ դրամաստեղծ միավորին բնորոշ ռիսկերը: Արժեզրկման ստուգման նպատակով ակտիվները, որոնց արժեզրկումը հնարավոր չէ գնահատել անհատական հիմունքով, խմբավորվում են ակտիվների փոքրագույն խմբերի, որոնք շարունակական օգտագործման արդյունքում առաջացնում են այլ ակտիվներից կամ ակտիվների խմբերից կամ դրամաստեղծ միավորից մեծապես անկախ դրամական միջոցների ներհոսքեր:

Համալսարանի կորպորատիվ ակտիվները չեն առաջացնում դրամական միջոցների առանձին հոսքեր և օգտագործվում են մեկից ավելի դրամաստեղծ միավորի կողմից: Կորպորատիվ ակտիվները բաշխվում են դրամաստեղծ միավորներին խելամիտ և հետևողական հիմունքով և ստուգվում են արժեզրկման տեսանկյունից որպես այն դրամաստեղծ միավորի մաս, որին բաշխվում է կորպորատիվ ակտիվը:

Արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում: Դրամաստեղծ միավորների գծով ճանաչված արժեզրկումից կորուստները նվազեցնում են դրամաստեղծ միավորի (դրամաստեղծ միավորների խմբի) կազմի մեջ մտնող ակտիվների հաշվեկշռային արժեքները հավասարաչափ հիմունքով:

Նախորդ ժամանակաշրջաններում ճանաչված արժեզրկումից կորուստները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ բացահայտելու, թե առկա է արդյոք որևէ հայտանիշ, ըստ որի արժեզրկումից կորուստը հնարավոր է, որ այլևս գոյություն չունի կամ նվազել է: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է, եթե փոխվել են փոխհատուցվող գումարը որոշելու համար օգտագործվող գնահատումները: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որ ակտիվի հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլինի, առանց համապատասխան մաշվածության և ամորտիզացիայի, եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլինի:

(ը) Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ

Կարճաժամկետ հատուցումներ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով պարտականությունները չափվում են առանց զեղչման և ծախսագրվում են համապատասխան ծառայությունը մատուցելուց հետո: Պարտավորությունը ճանաչվում է այն գումարի չափով, որն ակնկալվում է վճարել որպես կարճաժամկետ դրամական միջոցների տեսքով պարգևավճար, եթե Համալսարանն ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն այդ գումարը վճարել որպես անցյալ ծառայության արդյունք կամ կարող է արժանահավատորեն գնահատել պարտականությունը:

Համալսարանը հատկացումներ է կատարում Հայաստանի պետական կենսաթոշակային հիմնադրամին հոգուտ իր աշխատակիցների: Հատկացումները ծախսագրվում են առաջանալուն պես:

(թ) **Հասույթ**

(i) ***Վաճառված ապրանքներ***

Բնականոն գործունեության ընթացքում ապրանքների վաճառքից ստացված հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով՝ առանց վերադարձումների, առևտրային զեղչերի և իջեցումների: Հասույթը ճանաչվում է համոզիչ վկայության առկայության դեպքում՝ սովորաբար վաճառքի իրագործված պայմանագրի տեսքով, համաձայն որի գնորդին են փոխանցվել ապրանքների սեփականության հետ կապված ռիսկերի և հատույցների նշանակալի մասը, հատուցման ստացումը հավանական է, հնարավոր է արժանահավատորեն չափել գործարքի հետ կապված ծախսերը ու ապրանքների հնարավոր վերադարձը, չի դիտվում շարունակական մասնակցություն ապրանքների կառավարմանը և հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը: Եթե գոյություն ունի հավանականություն, որ կտրամադրվեն զեղչեր և գումարը հնարավոր կլինի արժանահավատորեն չափել, ապա զեղչը ճանաչվում է որպես հասույթի նվազեցում՝ վաճառքի ճանաչման պահին:

(ii) Ծառայություններ

Մատուցված ծառայություններից ստացված հասույթը ճանաչվում է շահույթում կամ վնասում հաշվետու ամսաթվի դրությամբ գործարքի ավարտման աստիճանի չափով: Գործարքի ավարտման աստիճանը գնահատվում է կատարված աշխատանքի ուսումնասիրության արդյունքների հիման վրա:

(Ժ) Այլ ծախսեր

(i) Վարձակալության գծով վճարներ

Գործառնական վարձակալության գծով կատարված վճարները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը վարձակալության գործողության ժամկետի ընթացքում: Վարձակալության գծով ստացված խրախուսիչ գումարները ճանաչվում են որպես վարձակալության գծով կատարած ընդհանուր վճարների բաղկացուցիչ մաս՝ վարձակալության գործողության ժամկետի ընթացքում:

(ii) Սոցիալական ծախսումներ

Այն չափով որքանով սոցիալական ծրագրերին Համալսարանի հատկացումները ծառայում են հանրության շահերին և չեն սահմանափակվում Համալսարանի աշխատակիցներով, դրանք ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ առաջանալուն պես:

(ի) Ֆինանսական եկամուտ և ծախսեր

Ֆինանսական եկամուտը ներառում է ներդրումների գծով տոկոսային եկամուտը և փոխարժեքային տարբերություններից ստացված շահույթը: Տոկոսային եկամուտը ճանաչվում է շահույթում կամ վնասում հաշվեգրվելուն պես՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Ֆինանսական ծախսերը ներառում են փոխառությունների գծով տոկոսային ծախսերը, փոխարժեքային տարբերություններից առաջացած վնասը և ֆինանսական ակտիվների գծով ճանաչված արժեզրկումից կորուստները:

Փոխառության ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի չեն որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանը, ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Փոխարժեքային տարբերություններից առաջացած շահույթը և վնասը ներկայացվում են զուտ հիմունքով որպես ֆինանսական եկամուտ կամ ֆինանսական ծախս՝ կախված այն հանգամանքից, թե արտադրության փոխարժեքային տարբերությունների շարժը զուտ օգուտ է, թե զուտ վնաս:

(լ) Շահութահարկ

Շահութահարկի գծով ծախսը բաղկացած է ընթացիկ հարկից: Ընթացիկ հարկը ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է ձեռնարկատիրական գործունեության միավորումներին կամ ուղղակիորեն սեփական կապիտալում կամ այլ համապարփակ եկամտում ճանաչված տարրերին:

Ընթացիկ հարկը տարվա շահութահարկի գծով ակնկալվող վճարման ենթակա հարկի գումարն է, որը հաշվարկվում է կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ, ըստ էության, ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ և ներառում է նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները:

Իրական արժեքի որոշում

Համալսարանի հաշվապահական հաշվառման քաղաքականության մի շարք դրույքներ և բացահայտումներ պահանջում են իրական արժեքի որոշում ինչպես ֆինանսական, այնպես էլ ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների համար: Իրական արժեքները որոշվել են չափման և բացահայտման նպատակով՝ հիմք ընդունելով ստորև ներկայացված մեթոդները: Կիրառելիության դեպքում, իրական արժեքների որոշման ժամանակ կատարած ենթադրությունների մասին լրացուցիչ տեղեկատվությունը բացահայտվում է ակտիվին կամ պարտավորությանը վերաբերող ծանոթագրությունում:

(ա) Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր

Առևտրական և այլ դեբիտորական պարտքերի, բացառությամբ անավարտ շինարարության, իրական արժեքը գնահատվում է որպես հաշվետու ամսաթվի դրությամբ գործող շուկայական տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ապագա հոսքերի ներկա արժեք: Իրական արժեքը որոշվում է բացահայտման նպատակների համար:

(բ) Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ

Իրական արժեքը, որը որոշվում է բացահայտման նպատակների համար, հաշվարկվում է հիմք ընդունելով մայր գումարի և տոկոսագումարների գծով դրամական միջոցների ապագա հոսքերի ներկա արժեքը՝ զեղչված հաշվետու ամսաթվի դրությամբ գործող շուկայական տոկոսադրույքով:

1. Հիմնական միջոցներ

Հազար դրամ

	Շենքեր, շինություններ	Կառու- ցվածք- ներ	Փոխա- նցվող հարմա- րանքն- եր	Մեքեն- աներ և սարքա- վորում- ներ	Տրան- սպոր- տայի և միջոց- ներ	Արտա- դրակա- ն, տնտես- ական գույք	Այլ հիմնակ- ան միջոցնե- ր	Շահագործմ- ան չհանձնված հիմնական միջոցներ	Ընդամեն- ը
<i>Սկզբնական արժեք</i>									
2010թ. հունվարի 1-ի դրությամբ	<u>1301637</u>	<u>33608</u>	<u>14379</u>	<u>770964</u>	<u>24372</u>	<u>172901</u>	<u>143445</u>	<u>4584</u>	<u>2465890</u>
Ավելացում			3877	24039		5976	344		34236
Օտարում				547		813			1360
2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>1301637</u>	<u>33608</u>	<u>18256</u>	<u>794456</u>	<u>24372</u>	<u>178064</u>	<u>143789</u>	<u>4584</u>	<u>2498766</u>
Ավելացում			12900	29421		6320	3602		52243
Օտարում				373		2843	323		3539
2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>1301637</u>	<u>33608</u>	<u>31156</u>	<u>823504</u>	<u>24372</u>	<u>181541</u>	<u>147068</u>	<u>4584</u>	<u>2547470</u>
Ավելացում				34201		19500	6706		60407
Օտարում				50					50
2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>1301637</u>	<u>33608</u>	<u>31156</u>	<u>857655</u>	<u>24372</u>	<u>201041</u>	<u>153774</u>	<u>4584</u>	<u>2607827</u>

[illegible]

2.Ոչ նյութական ակտիվներ

Հազար դրամ

	<i>Լիցենզիաներ և թույլտվություններ</i>	<i>Համակարգչային ծրագրեր</i>	<i>Այլ ակտիվներ</i>	<i>Ընդամենը</i>
<i>Սկզբնական արժեք</i>				
2010թ. հունվարի 1-ի դրությամբ	<u>0</u>	<u>1528</u>	<u>0</u>	<u>1528</u>
Ավելացում				0
Օտարում				0
2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>0</u>	<u>1528</u>	<u>0</u>	<u>1528</u>
Ավելացում				0
Օտարում				0
2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>0</u>	<u>1528</u>	<u>0</u>	<u>1528</u>
Ավելացում				0
Օտարում				0
2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>0</u>	<u>1528</u>	<u>0</u>	<u>1528</u>
<i>Կուտակված մաշվածություն</i>				
2010թ. հունվարի 1-ի դրությամբ	<u>0</u>	<u>306</u>	<u>0</u>	<u>306</u>
Տարվա ծախս				0
Օտարման հետևանքով դուրսգրում				0
2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>0</u>	<u>306</u>	<u>0</u>	<u>306</u>

Տարվա ծախս				0
Օտարման հետևանքով դուրսգրում				0
2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>0</u>	<u>306</u>	<u>0</u>	<u>306</u>
Տարվա ծախս				0
Օտարման հետևանքով դուրսգրում				0
2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>0</u>	<u>306</u>	<u>0</u>	<u>306</u>
<i>Հաշվեկշռային արժեք</i>				
2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>0</u>	<u>1222</u>	<u>0</u>	<u>1222</u>
2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>0</u>	<u>1222</u>	<u>0</u>	<u>1222</u>
2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>0</u>	<u>1222</u>	<u>0</u>	<u>1222</u>

3. Պաշարներ

	Անավարտ Հումք և նյութեր	արտադրություն	Արտադրանք	Ընդամենը
2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>9218</u>	<u>79823</u>	<u>23653</u>	<u>112694</u>
2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>11609</u>	<u>48005</u>	<u>26396</u>	<u>86010</u>
2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>10304</u>		<u>26396</u>	<u>36700</u>

4. Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ

	Հաշվարկային Հաշիվ	Դրամարկդ	Ընդամենը
2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>43331</u>	<u>1888</u>	<u>45219</u>
2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>37346</u>	<u>304</u>	<u>37650</u>

2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>63334</u>	<u>150</u>	<u>63484</u>
----------------------------------	--------------	------------	--------------

5. Կուտակված շահույթ

	Կուտակված շահույթ (վնաս)
2010թ. հունվարի 1-ի դրությամբ	<u>263518</u>
Ավելացում	45001
Շահաբաժիններ	-
2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>308519</u>
Ավելացում	76505
Շահաբաժիններ	
2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>385024</u>
Ավելացում	7779
Շահաբաժիններ	
2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>392803</u>

6. Վարկեր և փոխառություններ

	Վարկեր	Փոխառություններ	Ընդամենը
2010թ. հունվարի 1-ի դրությամբ	=	=	=
Ավելացում	130367		130367
Մարում	7171		7171
2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>123196</u>	<u>0</u>	<u>123196</u>
Ավելացում	729387		729387
Մարում	780144		780144
2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>72439</u>	<u>0</u>	<u>72439</u>

Ավելացում	485183		485183
Մաքում	353752		353752
2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>203870</u>	<u>0</u>	<u>203870</u>

7. Հասույթ

	2012թ. դեկտեմբեր ամսվա դրությամբ	2011թ. դեկտեմբեր ամսվա դրությամբ	2010թ. դեկտեմբեր ամսվա դրությամբ
Հասույթ ծառայությունների մատուցումից	742344	804813	822321
Հասույթ ապրանքների իրացումից			
Հասույթ արտադրանքի իրացումից	786	786	1029
2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>743130</u>	<u>805599</u>	<u>823350</u>

8. Ինքնարժեք

	2012թ. դեկտեմբեր ամսվա դրությամբ	2011թ. դեկտեմբեր ամսվա դրությամբ	2010թ. դեկտեմբեր ամսվա դրությամբ
Արտադրանքի ինքնարժեք	656	582	828
Վաճառված ապրանքների ինքնարժեք			
	365247	324158	293862
Ծառայությունների մատուցման ինքնարժեք			
2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>365903</u>	<u>324740</u>	<u>294690</u>

9. Իրացման ծախսեր

	2012թ. դեկտեմբեր ամսվա դրությամբ	2011թ. դեկտեմբեր ամսվա դրությամբ	2010թ. դեկտեմբեր ամսվա դրությամբ
Գովազդի գծով ծախսեր			
Իրացման տրանսպորտային ծախսեր			
Հեղինակային իրավունքի վճարներ			
Կոմիսիոն վարձատրություն			
Մաշվածություն և ամորտիզացիա	5619	15926	19453

Այլ	<u>5619</u>	<u>15926</u>	<u>19453</u>
2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ			

10. Վարչական ծախսեր

	2012թ. դեկտեմբեր ամսվա դրությամբ	2011թ. դեկտեմբեր ամսվա դրությամբ	2010թ. դեկտեմբեր ամսվա դրությամբ
Աշխատավարձ	123468	124876	172195
Հիմնական միջոցների և ընթացիկ նորոգման ծախսեր			
Կոմունալ ծառայություններ և գրասենյակային ծախսեր	89631	84123	59036
Առուղիտորական և խորհրդատվական ծախսեր	410	432	432
Ապահովագրական ծախսեր	232	244	500
Կադրերի պատրաստման ծախսեր			
Գործառնական վարձակալության գծով ծախսեր			
Փոստի և կապի ծառայությունների գծով ծախսեր	1260	1327	1201
Գործունեության իրականացման թույլտվության ծախսեր			
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	34397	36223	35994
Բանկային ծառայությունների վճարներ		15413	4343
Մաշվածություն և ամորտիզացիա			
Հարկերի գծով ծախսեր	135967	143185	150517
Այլ	0	0	0
2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>385365</u>	<u>405823</u>	<u>424218</u>

11. Այլ եկամուտներ

	2012թ. դեկտեմբեր ամսվա դրությամբ	2011թ. դեկտեմբեր ամսվա դրությամբ	2010թ. դեկտեմբեր ամսվա դրությամբ
Եկամուտներ ներված պարտավորություններից			
Եկամուտներին վերաբերվող շնորհներ			
Այլ	990972	1020817	905572
2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>990972</u>	<u>1020817</u>	<u>905572</u>

Տնօրեն



Փոխտնօրեն իրավապահ

Ա. Դարբինյան

Տ. Գևորգյան